ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ՄԲ. ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ.—Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ 1859 ին։

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ՄՈՎՍԷՍԵԱՆ, ՊՕԼՈՒՑԻ, Մբ.—Ծ. 1838, Զռ. 1868, Ժամասաց 1870-81, կ'այցելէ Պոլու (1881-82), Խոստ. 1883-1890. մասնագէտ Զայնագրութեան և քաջ երաժիշտ. կը վախճանի 1891 ին. յիշատակ կը թողու Ռումելիի երկաթուղւոյ ութ հատ արժեթուղթեր։

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ՇԻՐԱԿԱՑԻ, (Է. դար).—Աշակերտ հայագէտ և գիտնական յոյն Տիւքիկոսի՝ որ ի Տրապիզոն։ Անանիա վրդ. Տոմարագիտութիւն և ուսողական գիտութիւններ ուսանելով՝ փափաքեցաւ որ նոյն ուսումները տարածուին Հայոց մէջ ալ ինչպէս իր Ինքնակենսագրութեան մէջ կը կարդանք. ուր և կը գրէ. «... և պարզևեաց Աստուած զխնդրուածս իմ. զնացի ողջացեալ ի քաղաքն Երուսաղէմ և անտի յԱղեքսանդրիա և դարձայ ի Կ. Պոլիս. և կատարեալ իմաստութեամբ դարձայ ի տեղիս և սկսայ ուսուցանել և վարդապետել»։ Սամուէլ քհ. Անեցի իր Պատմութեան մէջ (էջ 85), Անանիա վրդ. ի աշակերտաց սաղիմական ուղղութեան մասին կուտայ հետևեալ տեղեկութիւնը. «Աշակերտքն Անանիայի Հերմոն և Տրդատ՝ և Ազարիա, Եղեկիէլ և Կիրակոս՝ երթեալ յԵրուսաղէմ հաւանեցան երկաբնակացն, և ի դարձին ո՛չ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա։ Իսկ նոքա ուր հասանէին՝ զնա ասէին պատճառ հայհոյութեան՝ զոր մի՛ ոք իշխեսցէ ասել կամ հաւատալ»։

ԱՆԱՆՈՒՆ ՍԱՂԻՄԱԿԱՆ ԳՐԻՉՆԵՐ.—Մեր հետազօտութեանց համաձայն, գտած ենք հետևեալ սաղիմական անանուն գրիչները, զորս կը դնենք հոս թուականի կարգաւ, անթուականներն ալ յարելով անոնց։

1.—Ճառընտիր բոլորգիր, գրեալ յԵրուսաղէմ, ի Սուրբն Յակոբ, ի թուին ՈԿԴ. (1215), յաւուրս Լևոնի արքային հայոց. ընդունարան վարուց և վկայաբանութեանց։ Ձեռ. ի Վենետիկ. Ս. Ղազար (Լիակ. Վ. Սրբ. Հատ. 11. էջ ՀՏ.)։

2.—Աւետարան, ընդօրինակուած ի Ս. Երուսաղէմ, 1439 ին. և յիշատակ դրուած Ս. Թորոս եկեղեցւոյն, 1516 ին. սոյն ձեռագիրը կը տարուի Սղանօղի Ս. Քառասունք եկեղեցին եւ այս